ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ — «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ №5 1960

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 1725 և 1728 ԹԹ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Մի քանի տարի առաջ Մատենադարանը ձեռնամուխ եղավ իր արխիվային ֆոնդերում պահվող պարսկերեն վավերագրերի գիտական հրատարակությանը։ Այժմ արդեն հրապարակի վրա են «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի Ա և Բ պրակները։ Հրատարակության է պատրաստվում «Կալվածագրեր»-ի Ա պրակը (ԺԴ—ԺԶ դդ.), որտեղ կընդգրկվեն նաև արաբերեն կալվածագրերը։ Կարելի է հուսալ, որ առաջիկա 10—15 տարիների ընթացքում այդ ուղղությամբ զգալի գործ կկատարվի և հաջորդաբար լույս կտեսնեն Մատենադարանի արխիվային ֆոնդերում առկա բոլոր կարևոր պարսկերեն ու արաբերեն վավերագրերը։

Արաբատառ վավերագրերի մեջ համեմատաբար փոքր թիվ են կազմում թուրքերեն վավերագրերը, որոնց ամբողջական հրատարակության ուղղությամբ դեռևս գործնական քայլեր չեն արված։ Դրանք թվով շուրջ 250 հատ են, որոնցից հնագույնը կրում է հիջրեթի 996 (1588) թվականը։ Այս փաստաթղթերը մեծ մասամբ հրովարտակներ են՝ տրված ինչպես օսմանյան սուլթանների, այնպես նաև մեծ վեզիրների կամ տեղական փաշաների կողմից։ Կան նաև հոգևորական կամ Շարʼի ատյաններում կազմված արձանագրություններ, հարկային-ֆինանսական փաստաթղթեր, ինչպես նաև պաշտոնական ու անձնական բնույթի գրագրություններ։

Սուլթանական հրովարտակները հիմնականում տրված են հայոց կաթողիկոսներին, նրանց իրավունքների հաստատման, նվիրակների կամ ուխտավորների ազատ երթևեկության, եկեղեցական տուրքերի դանձման և հայոց եկեղեցուն վերաբերող այլ հարցերի կապակցությամբ։ Կան նաև տեղական բնույթ կրող հրամանագրեր, որոնք վերաբերում են պետական պաշտոնյաների և հայ հոգևորականության միջև ծագած հարցերին։

Հայոց եկեղեցու և հատկապես հայ ժողովրդի արևմտյան հատվածի իրավա-քաղաքական ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող այս փաստաթղթերը համապատասխան մասնագետների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել։ Միակ հեղինակը, որ քիչ թե շատ հանդամանալից ուսումնասիրության է ենթարկել դրանք, եղել է Սիմեոն կաթողիկոս Երևանցին, որը սակայն, կարող էր խոսել միայն մինչև իր դրքի շարադրման ժամանակները (1765 թ.) Էջմիածնի դիվանատանը գտնվող վավերագրերի մասին։

1956 թ. լույս տեսած «Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ»-ի Ա պրակի առաջաբանում անդրադառնալով Սիմեոն Երևանցու «Զամբռ» աշ-

խատութեանը, նշել ենք, որ այնտեղ հիշատակված համարյա բոլոր փաստաթղթերը (հրովարտակներ, հրամանագրեր, կալվածագրեր և այլն) չնչին բացառությամբ հասել են մեզ և այժմ պահվում են Մատենադարանի Արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի առանձին թղթապանակներում։ «Հրովարտակներ»-ի Ա. և Բ պրակների ծանոթագրություններում բազմիցս առիթ ենք ունեցել ասելու, որ հիշյալ վավերագրերի վրա պահպանվել են Սիմեոն Երևանցու կողմից կատարված համառոտ մակագրություններ վավերագրերի բովանդակության վերաբերյալ, որոնք նույնությամբ, իսկ երբեմն էլ մասնակի խմբագրությունից հետո մտել են բերված «Ջամբռ»-ի համապատասխան գլուխներում։ Այսպես, սխալված չենք լինի, եթե ասենք, որ «Ջամբռ»-ի ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ և ԻԵ գլուխները իրենց մեծ մասով իսկ Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ գլուխները համարյա ամբողջությամբ կազմված են հիշյալ վավերագրերի վրա պահպանված համառոտ մակագրություններից։

«Ջամբռ»-ի ուշագիր ուսումնասիրությունը և նրա համեմատությունը վավերագրերի վրա պահպանված և նրանց բովանդակությանը վերաբերող մակագրությունների հետ թույլ են տալիս հաստատապես ասելու, որ նրա հեղինակը չտիրապետելով պարսկերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներին, կամ ավելի ճիշտ գրաճանաչ չլինելով այդ լեզուներում և չկարողանալով անձամբ ընթերցել վավերագրերը, դրանք ընթերցել է տվել այդ լեզուներին գիտակ մեկին և նրանց համառոտ բովանդակությունը գրել տվել (երբեմն նաև իր իսկ ձեռքով արձանագրել) վավերագրերի վրա։ Գիրքը շարադրելիս նա հենվել է այդ մակագրությունների վրա և իր բոլոր եզրակացությունները կատարել է ելնելով այդ համառոտ անոտացիաների տվյալներից։

Ինչպես յուրաքանչյուր ուսումնասիրության հեղինակի, այնպես նաև Սիմեոն Երևանցուն այդ վավերագրերը հետաքրքրել են միայն իր ուսումնասիրության մեջ արծարծված հարցերի, այսինքն Էջմիածնի և Արևելյան Հայաստանի այլ վանքերի կալվածատիրական իրավունքների և հարկային արտոնությունների կամ մուաֆության պատմության լուսաբանման առնչությամբ։ Ուստի, ինչպես բուն իսկ վավերագրերի վրա կատարված համառոտ մակագրություններում, այնպես նաև «Ջամբռ»-ում, հիշյալ վավերագրերը այդ տեսանկյունով են բնութագրված։ Սակայն ինչպես ցույց տվեց «Մատենադարանի պարսկերեն հրովարտակների» Ա. և Բ պրակների հրատարակությունը, այդ վավերագրերը հետաքրքիր են ոչ միայն վանքերին տրված մուաֆության իրավունքի կամ նրանց կալվածատիրական կարողությունների էության ուսումնասիրության տեսակետից, այլ որպես պատմական հավաստի սկզբնաղբյուրներ, շատ ավելի լայն հետաքրքրություն են ներկայացնում և ԺԴ—ԺԹ դդ. քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ հսկայական փաստական նյութ են պարունակում։

Ներկա հոդվածի նպատակներից դուրս է խոսել «Ջամբռ»-ում հիշված այն բոլոր վավերագրերի մասին, որոնց բնագրերը այժմ պահվում են Մատենադարանի արխիվային ֆոնդերում։ Ինչպես նշված է «Հրովարտակներ»-ի Ա. և Բ պրակների ծանոթագրություններում, նույն մատենաշարի հետագա հրատարակություններում ևս մենք հերթականորեն առիթ կունենանք մեկ առ մեկ խոսելու այդ բոլորի մասին։ Հույս ունենք, որ այդ հրատարակությունները մեծ չափով կհեշտացնեն ուսումնասիրողների գործը և նրանք այլևս ստիպված չեն լինի բավարարվելու միայն «Ջամբռ»-ի խիստ համառոտ, եր-

բեմն նաև աղավաղված տվյալներով։ Դա հավասարապես վերաբերում է ինչպես պարսկերեն ու արաբերեն, այնպես նաև թուրքերեն վավերագրերին, որոնց ամբողջական հրատարակության ուղղությամբ, ինչպես ասվեց, դեռևս գործնական քայլեր չեն արված։

Այս տեսակետից առավել հատկանշական են 1724—1736 թթ. թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի ժամանակավոր օկուպացիայի ժամանակաշրջանին վերաբերող վավերագրերը (52 հատ)։ Ստորև կփորձենք ծանոթանալ այդ շրջանի երկու վավերագրերի հետ, որոնք պարունակում են հետաքրքիր տվյալներ ոչ միայն Էջմիածնի վանքի կալվածների և նրա վայելած հարկային արտոնությունների մասին, այլ հիմնականում վերաբերելով Վաղարշապատ գյուղից դանձվող հարկերին, մեծ չափով օգնում են պարզելու 1725—1736 թթ. աշխատավորության հարկային պարտավորությունների ինչպես նաև Օսմանյան պետության Արևելյան Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում վարած հարկային քաղաքականության հետ առնչվող որոշ հարցեր։

* * *

Իր աշխատության ԺԴ գլխում Սիմեոն Երևանցին շարադրելով Էջմիածնի վանքին տրված հարկային արտոնությունների կամ մուաֆությանի պատմությունը, մի առ մի թվարկում է բոլոր կարևոր պաշտոնական փաստաթղթերը՝ հրովարտակներն ու այլ կարգի արտոնագրերը, որոնք ժամանակին ձեռք է բերել վանքը օտար իշխանավորներից։ Այս գլխում հիշատակված առաջին թուրքերեն փաստաթուղթը հիջրեթի 1137 (1725) թ. Երևանի Ռաջաբ փաշայի կնիքը կրող «Գրքաձև դէֆթէրն» է։

«Դարձեալ ի Ռճլէ թուին տաճկաց, —գրում է Երևանցին,— մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի յԵրևան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝ ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զմաղաֆութենէ

[1] Բոլորովին էլ չթերագնահատելով Սիմեոն Երևանցու այս իրոք մեծարժեք աշխատության նշանակությունը ԺԸ դարի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության գործում (տե՛ս այս մասին «Հրովարտակներ» պրակ Ա, Առաջաբան, էջ 12—14), միաժամանակ չենք կարող չառարկել ուսումնասիրողներից ոմանց այն կարծիքին, ըստ որի «Ջամբռում» բավականաչափ սպառիչ և բազմակողմանի ուսումնասիրության են ենթարկված հեղինակի օգտագործած բոլոր պարսկերեն և թուրքերեն վավերագրերը։ Այս հարցին մենք տարբեր առիթներով անդրադարձել ենք «Հրովարտակներ»-ի Ա և Բ պրակների առաջաբաններում և ծանոթագրություններում։ Սխալ է և գիտական տեսակետից դատապարտելի նաև «Ջամբռ»-ը դիտել որպես ԺԵ—ԺԹ դդ. սոցիալ-տնտեսական և հատկապես ագրարային հարաբերությունների պատմության սկզբնաղբյուր։ «Ջամբռ»-ը կարող է որպես սկզբնաղբյուր ծառայել միայն ԺԸ դարի և հատկապես նրա երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությամբ զբաղվողներին։ ԺԵ—ԺԷ դարերի համար «Ջամբռ»-ը ոչ թե սկզբնաղբյուր է, այլ մի ուսումնասիրություն, որտեղ Սիմեոն Երևանցին, ինչպես վերը նշեցինք, փորձում է պարսկերեն և թուրքերեն վավերագրերի վրա կատարված համառոտ անոտացիաների հիման վրա գրել վանքի կալվածատիրության և հարկային արտոնությունների պատմությունը։ Հողատիրության և հողային հարաբերությունների մասին խոսելիս, նա վավերագրերի տվյալները բացատրում է յուրովի, ելնելով իր ժամանակի հարաբերություններից, առանց խորանալու վավերագրերի էության մեջ։ Ուստի ԺԵ—ԺԷ դդ. վավերագրերում արծարծված այս կամ այն հարցի վերաբերյալ Սիմեոն Երևանցու կողմից տրված բացատրությունները կարող են հիմք ծառայել միայն ԺԸ դարի հողային հարաբերությունների ուսումնասիրության։

սրբոյ Աթոռոյս։ Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքաձև դէֆթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ՝ և զվերջն Շեխ-իսլամն։ Յորում գրեցուցանէ զմլքատու գեօղօրայսն սրբոյ Աթոռոյս, որք են այսոքիկ։ Այս մեր գեօղս, Մաստարայ, Օշական, Ֆռանկանոց և Քիրաշլու։ Այլ և մաղաֆ եղեալ մուլքն Աթոռոյս ի սմա գրեցեալ են այսոքիկ։ Ի մեր գեօղս վեց շէն ջրաղաց, երկու աւեր՝ մէկ շէն դինկ, երկու ձիթահանք, քսան և ինն արտ ցանելի, երեք եօնջալուղ, երեք այգի. ի Յօշական երկու այգի, մի ևս աւեր, ի Փարաքար երկու այգի, յԵրևան երկու այգի, երկու ջրաղաց, ի Քեալարայ երկու ջրաղաց, մէկ դինկ, երեք ջրաղացի ջուր ածեալ ի Զանկի գետոյն՝ որ է Նահապետ կաթուղիկոսի հանեալ մեծ առուն, որ Դալմա ասի, որոյ ակն է մերձ Մարիանլար կոչեցեալ գեղջն, որ յԵրևան՝ ի ներքոյ բերդին. և վեց հարիւր ոչխար, և սեագլուխք և միաբանքն մաղաֆ և մի՛ տալցեն զիարաճ, և այսքան վանօրայք ևս ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաղաֆ լիցին, սուրբ Հռիփսիմէն, Շողակաթն, Գայիանէն, Երևանու սուրբ Անանիա առաքելոյ և Զորագեղոյ անապատքն։ Բայց միայն խալիֆայն ի տարեջն զվեց հազար ութն հարիւր ստակ տալցէ յարքունիս, և ոչ այլ ինչ։ Գի՛տ զայս գիրս ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Թիւն տաճկաց ՌՃԼԷ։ Այսպիսի օրինակաւ գիր Թ հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակքն»[1]։

Այս վավերագրից անմիջապես հետո հիշատակված են ևս երկու «դէֆթէր»-ներ, որոնցից առաջինը կրում է հիջրեթի 1140 (1728), իսկ երկրորդը 1143 (1731) թվականները. նույնպիսի մանրամասնությամբ և արտաքին նշանների նկարագրությամբ՝ «Որք երկուքն ևս շատ հարկաւորք են և պահելիք, և են երկար գրքաձևք, մին չորս թուղթք, և միւսն հինգ թուղթք, որք երկուքն ևս գոն ի սուրբ Աթոռս, ունելով զծաղկեալ պահարան յատուկ յատուկ, և են ի միում ջղտանաձև թղթեալ պահարանում»[2]։

Այս վավերագրերը հիշված են նաև «Զամբռ»-ի Օսմանյան սուլթաններից, փաշաներից և շեյխ-ուլ-իսլամներից ստացված հրովարտակների ու այլ փաստաթղթերի թվարկմանը նվիրված ԻԲ և ԻԴ գլուխներում[3]։ Սակայն ԻԴ գլխում հիշված է ևս մի «գրքաձև» վավերագիր, տրված Ահմադ փաշայի կողմից. «Ահմէտ փաշային գրքաձև թուղթ, որ նման Ռաջաբի փաշային գրքաձև թղթոյն (որ ի վերդ յիշեցաւ ի Ա համարն), գրէ զորպէսն գեղջս մերոյ և զամենայն մուլքսն սրբոյ Աթոռոյս մաղաֆ առնելով, ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԺԱ համարով։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեանն»[4]։

Սիմեոն Երևանցին այս վերջին վավերագիրը այնքան էլ կարևոր չի համարել, շեշտելով հատկապես, որ այն «Նման է Ռաջաբ փաշայի թղթոյնն»։ ԺԴ գլխում այս վավերագիրը առանձին չի հիշված։ Ինչպես վերը տեսանք, Ռաջաբ փաշայի գրքաձև վավերագրի բովանդակությունը շարադրելուց հետո ասված է. «Այսպիսի օրինակաւ (իմա՝ Էջմիածնի մուլքերին և մուաֆությանը վերաբերող — Հ. Փ.) գիր Թ հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակքն»։ Այդ 9 վավերագրերը թվարկված են ԻԴ գլխի Բ, Զ, Է, ԺԱ, ԺԲ,

---

[1] Զամբռ, էջ 133—134։

[2] Նույն տեղում, էջ 135։

[3] Նույն տեղում, էջ 243 § ԼԱ, էջ 244 § ԼԷ, էջ 249 § Ա։

[4] Նույն տեղում, էջ 250, § ԺԱ։

Ի, ԻԲ և ԻԵ հոդվածներում, որոնցից ԺԱ հոդվածի տակ հիշվածը Ահմադ փաշայի հիշյալ գրքաձև վավերագիրն է։

Այսպիսով ուրեմն «Զամբռ»-ում հիշված է 4 «գրքաձև դէֆթէր», «թուղթ» կամ «ֆերման», որոնցից առաջինը վերագրվում է Ռաջաբ փաշային, երկրորդը՝ Ահմադ փաշային, երրորդը՝ Սուլթան Ահմադ Գ-ին և չորրորդը՝ Սուլթան Մահմուդ Ա-ին։ Նույն հերթականությամբ այս վավերագրերը գրանցված են Մատենադարանի Արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանի 1գ թղթապանակում 293, 316, 320 և 332 համարների տակ։ Վավերագրերի վրա առկա են Սիմեոն կաթողիկոսի գրած համարները։ Այսպես, թղթ. 1գ № 293 Ռաջաբ փաշայի կնիքը կրող վավերագրի վրա կա «Ա» համարը, դա «Զամբռ»-ի ԻԳ գլխի Ա վավերագիրն է։ Թղթ. 1գ № 316 վավերագրի վրա նույն գլխի, մեզ արդեն ծանոթ, «ԺԱ» համարն է, թղթ. 1գ, № 320 վավերագրի վրա կա «ԼԱ» համարը, որը «Զամբռի» ԻԲ գլխի համապատասխան համարն է և վերջապես թղթ. 1գ, № 332 վավերագրի վրա կա նույն գլխի «ԼԷ» համարը։

Պետք է ասել սակայն, որ ինչպես երևում է Սիմեոն Երևանցու նկարագրություններից, նա այնքան էլ ճիշտ պատկերացում չունի խնդրո առարկա վավերագրերի բնույթի մասին։ Նրա պատկերացմամբ այդ չորս վավերագրերը բոլորն էլ գրվել են Երևանում, տեղի փաշաների ու շեյխ-ուլ-իսլամների կարգադրությամբ։ Դրանցից երկուսը (№ 320 և 332) իրենց առաջին էջի վրա կրում են Սուլթանի մեծ թուղրան, որը և առիթ է տվել Երևանցուն դրանց անվանելու «գրքաձև ֆարման»։ Իրականում սակայն, դրանք բոլորն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն Երևանի երկրի կամ «լիվալի» հարկային մատյանից հանված քաղվածքներ։

Նման հարկային մատյաններ կային Օսմանյան կայսրության բոլոր մեծ ու փոքր վարչական կենտրոններում։ Կային ինչպես վիլայեթների (دفاتر مفصل ولايات), այնպես նաև լիվաների ու նահիաների դաֆթարներ։ Վիլայեթի դաֆթարում գրանցված էին տվյալ վիլայեթի կազմի մեջ մտնող լիվաներին ենթակա բոլոր գյուղերն ու այլ բնակավայրերը, ըստ առանձին նահիաների։ Այս ընդարձակ դաֆթարից առանձին գրքերով դուրս էին գրվում լիվաների նահիաների ցուցակները և կազմվում էին առանձին դաֆթարներ։ Հարկային այսպիսի դաֆթարները անպայման առաջին էջի վրա կրում էին սուլթանի թուղրան[1]։

Մատենադարանի արխիվում պահվող հիշյալ չորս դաֆթարները հիմք են տալիս ասելու, որ վիլայեթների ընդարձակ մատյաններից քաղվածաբար առանձնացվում էին նաև յուրաքանչյուր գյուղի կամ առանձին լիվաների մեջ մտնող այլ հարկատու օբյեկտների հարկացուցակները, որոնք պահվում էին նույն վայրում, կամ տրվում էին տվյալ հարկատու համայնքին, որպեսզի վերջինս ըստ այնմ կատարեր իր հարկային պարտավորությունները պետության նկատմամբ։ Այնպես որ ճիշտ չէ Սիմեոն Երևանցին, երբ գրում է.

---

[1] Տե՛ս دفتر مفصل ولايت كورجستان، تورکجه متنى ترجمه تدقيق و تحشيه ايدن س. جيكيا، برنجى كتاب—متن، تبيليسى—١٩٤٧ ვურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, თურქული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკვლევა და კომენტარიები დაურთო სერბი ჯიქიამ, წიგნი 1 — ტექსტი, თბილისი, 1947, ფაქსიმილე, 1 ᲐᲑ \ 1։ Այսուհետև «Վրաստանի ընդարձակ դաֆթարը»։

«Ի Ռձկէ թուին տաճկաց՝ մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի յԵրևան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝ ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զմաղաքութենէ սրբոյ Աթոռոյս։ Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքաձև դէֆթէր մի...» կամ «Յաւուրս Կարապետ կաթուղիկոսին ձեռամբ փաշային Երևանու արդ առնեն Սուլթան-Ահմէտ թագաւորին Օսմանցւոց և գրեն զդէֆտէր մի տաճկերէն...» և կամ «Սուլթան Ահմէտին ֆարման գրքաձև ի յաւուրս Կարապետ կաթուղիկոսին ի Ռձկ թուոջն տաճկաց։ Զի գրքաձև տէֆթէր մի շինեն՝ գիտութեամբ Երևանու փաշային և Շեխ-իսլամին տաճկերէն...»[1]։

Թյուրիմացությունը այստեղ բավական բացահայտ է, որովհետև ինչպես վերը տեսանք այդ դաֆթարները Էջմիածնի կաթողիկոսների նախաձեռնությամբ կամ նրանց պահանջով չեն կազմվել, այլ պարզապես օկուպացիայից անմիջապես հետո կատարված աշխարհագրի հիման վրա կազմվել են ընդարձակ դաֆթարներ, ապա դրանցից հանվել են այս քաղվածքները Վաղարշապատ գյուղի բնակչության հարկային պարտավորությունների և այդ գյուղի սահմաններում գտնվող վանական կալվածների վերաբերյալ և հանձնվել ըստ պատկանելության առ ի գործադրություն. Երևանի փաշաների և մանավանդ Շեյխ-ուլ-իսլամների մասնակցությունը այս գործում նույնպես մտացածին է։ Նրանք կարող են դեր խաղացած լինել միայն Էջմիածնի մուաֆության իրավունքների հաստատման գործում, բայց ոչ երբեք գլխավոր հարկացուցակներից հանված այս քաղվածքների ձևը բերման հարցում։ Պարզ է ուրեմն, որ ի դեմս խնդրո առարկա 4 դաֆթարների մենք գործ ունենք օսմանյան հարկացուցակների ամենափոքր միավորներից մեկի առանձին տարբերակների հետ։ Կարճ ասած, դրանք Վաղարշապատ (Ուչքիլիսա) գյուղի պաշտոնական հարկացուցակներն են, որոնք իրենց ձևով, շարադրման եղանակով, գրչությամբ, և արտաքին բոլոր հատկանիշներով հար և նման են թուրքագիտությանը վաղուց արդեն ծանոթ Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթների, լիվաների և այլ վարչական ստորաբաժանումների հարկացուցակներին կամ «Գրանցման դաֆթարներին» (دفاتر تحرير)։

Խնդրո առարկա հարկացուցակների բովանդակության և նրանց աղբյուրագիտական արժանիքների մասին խոսելուց առաջ մի քանի խոսքով կաշխատենք պարզել նրանց ժամանակին և իրար հետ ունեցած աղերսին վերաբերող որոշ հարցեր։

Ուշադիր համեմատությունից պարզվում է, որ այս հարկացուցակներից ամենահինը «Ջամբռ»-ում ամենավերջը և ամենից համառոտ հիշված, թղթ. 1ա, վավ. 316 դաֆթարն է, որի թուրքերեն լրիվ բնագիրն ու հայերեն թարգմանությունը հրատարակում ենք սույն հոդվածի վերջում։ Թղթ. 1գ վավ. 293 դաֆթարը, որի մասին Սիմեոն Երևանցին հիշում է բոլորից առաջ և բոլորից ավելի մանրամասն, այս դաֆթարի պատճենն է հաստատված Ռաջաբ փաշայի ստորագրությամբ և կնիքով։ Պատճենի հարազատությունը հաստատում է Երևանի դպրի Աբդուլլան հետևյալ մակագրությամբ.

«Ստորագրված և կնքված իսկականի հետ ճիշտ է։ Գրեց փառավորյալ աստծու առաջ տնանկ Աբդուլլան, — ապահով Երևան քաղաքի դպրին, և

[1] Ջամբռ, էջ 133—134 և 243։

թող աստված գթա նրանց։ Կնիքի վրա կարդացվում է. «Աստված արդարադատ է, միակը և հավիտենականը, և նրա ստրուկն է Արդուլլան։ 1115 (?)»[1]։

Հարկացուցակի առաջին էջի վերին աջ անկյունում Ռաջաբ փաշայի կնիքն է, հետևյալ մակագրությամբ. «Ինչ որ աստված շնորհել է ինձ ես վերստին մատուցում եմ իմ արարչին, նրա ստրուկը՝ Ռաջաբ. 1135»[2]։ Կնիքին կից կատարված է հետևյալ մակագրությունը. «Այս ստորագրված դաֆթարի համաձայն պետք է վարվել... 1137»[3]։ Այս մասին է ահա, որ ինչպես վերը տեսանք, Սիմեոն Երևանցին գրում է. «Գլուխն ինքն կնքէ և զվերջն Շեխ-խալմն»։ Ընդօրինակությունը կատարված է պարսկական ոչ գրագետ ձեռագրով, կան բազմաթիվ աղավաղումներ։ Այն ինչ մյուս 3 իսկական դաֆթարները, ինչպես ընդունված էր, գրված են նման հարկացուցակներին հատուկ «սալադամա» գրությամբ։

Որ այս պատճենը հանված է հիջրեթի 1137 թվականին, դա կասկածի ենթակա չէ, որովհետև և՛ Ռաջաբ փաշայի և՛ դպրի կողմից կատարված մակագրությունները այդ թվականն են կրում։ Պարզ է ուրեմն, որ բնագիրը պետք է գրված լինի դրանից առաջ կամ լավագույն դեպքում նույն թվականին։ Սակայն բնագրի վրա առկա է 1139 թվականը, որը և հիմք է տվել Երևանցուն այն համարելու ավելի ուշ ստացված վավերագիր։ Երկու հարկացուցակների բովանդակության տառացի համընկնումը, պատճենի հարազատության մասին վկայող մակագրությունը և մանավանդ 1139 թվականը կրող դաֆթարի վրայի Ահմադ փաշայի մակագրության պատճենի առկայությունը Ռաջաբ փաշայի կողմից հաստատված դաֆթարի վրա, կասկած առաջացրեց մեր մեջ այդ վավերագրի թվականի նկատմամբ։ Եվ իսկապես, ուշադիր դիտելուց հետո նկատեցինք, որ կից հրատարակվող, Ահմադ փաշայի կողմից հաստատված դաֆթարի թվականը եղծված է։ Դաֆթարի վերջում թվականի մասին վկայող վերջաբության արաբերեն سبع (յոթ) բառը վերածված է تسع (ինը)-ի իսկ ١١٣٧-ի ٧ (7)-ը ջնջված է ու դարձրած ٩ (9)։

Այս բոլորից հետո պարզ է դառնում արդեն, որ հարկային ընդարձակ դաֆթարի այս անդրանիկ քաղվածքը հանված է հիջրեթի 1137 (1725) թվականին, թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի նվաճումից անմիջապես հետո։ Քաղվածքի վրա մեծ վեզիր և օկուպացիոն զորքերի ընդհանուր հրամանատար Ահմադ փաշան մակագրել է. «Ինչպես որ խնդրված է, մինչև բարձրագույն կառավարության կողմից սրբազան և շքեղ հրամանագրի ստացվելը այս հաստատուն դաֆթարի համաձայն թող վարվեն և թող խառսի մարդիկ ոտնձգություն չանեն»։ Նույն այս հարկացուցակի վերջին մասից իմանում ենք, որ Էջմիածինը Սուլթանից ստացած է եղել հատուկ մուաֆնամե, որը ներկայացված է եղել Ահմադ փաշային հաստատության, որից հետո «պետք է դրվեր առանձին հրովարտակ կամ «ամր-ի շերիֆ» ինչպես այդ մա-

---

[1] مطابق لاصله الممضى المختوم، نمقه الفقير الله عز شانه عبدالله القاضى بمدينه روان المحروسه عفى عنه ــ مهر ــ الله حسبى وحده و بقى عبده عبدالله. ١١١٥(؟)

[2] بما قسم نصيب الله لى فوضيت امرى الى خالقى، عبده رجب، سنه ١١٣٥

[3] اشبو دفتر ممضى موجبنجه عمل او لنور، فى ... سنه ١١٣٧

սին ասված է Ահմադ փաշայի վերոհիշյալ մակագրության մեջ։ Այս մակագրությամբ Ահմադ փաշան կարգադրում է, որպեսզի մինչև այդ հրովարտակի ստացվելը տեղի իշխանությունները, առաջին հերթին Երևանի նահանգապետ Ռաջաբ փաշան, հիմք ընդունեն այս հարկացուցակը, որի վերջին մասը ամբողջապես վերաբերում է Էջմիածնի վանքին տրված արտոնություններին։ Նման հարկացուցակներում առանձին հարկատու օբյեկտների թվարկումից հետո ամենայն մանրամասնությամբ հիշատակվում էին նաև վակֆային այն կալվածքներն ու այլ ստացվածքները, որոնք ազատվում էին հարկերից[1]։ Պարզ է, ուրեմն, որ այս վավերացված հարկացուցակները ժամանակավոր արտոնագրի կամ մուաֆնամեի դեր են կատարել։ Այնուհետև տեղում անհրաժեշտ է եղել հանել մի պատճեն, որը հաստատել է Ռաջաբ փաշան։ Երկու տարի հետո նորից նման փաստաթղթի կարիք է զգացվել և այս անգամ արդեն փորձ են արել ուղղակի թվականը փոխելով լոլա գնալ։

Հաջորդ երկու հարկացուցակները (թղթ. 1գ վավ. 320 և 332) վերաբերում են արդեն հիջրեթի 1140 (1728) և 1143 (1731) թվականներին և բովանդակությամբ իրար կրկնելով, ինչպես ասորև կոնտենենք, հիմնովին տարբերվում են 1137 (1725) թվականի հարկացուցակից։ Այս հարկացուցակների վրա սակայն չկան ո՛չ մեծ վեզիրների և ո՛չ էլ տեղական փաշաների կնիքներ կամ մակագրություններ, այլ դրանք սոսկ քաղվածքներ են կատարված արքունի դիվանատան պաշտոնյաների ձեռքով և կնքված վերջիններիս կնիքներով։ Հարկացուցակները, սակայն, ինչպես վերը տվիթ ունեցանք նշելու, բոլոր պաշտոնական հարկացուցակների նման, իրենց առաջին էջի վրա կրում են՝ առաջինը Սուլթան Ահմադ Գ-ի, իսկ երկրորդը՝ Սուլթան Մահմուդ Ա-ի թուղթանները։

* * *

Կասկածից դուրս է, որ այս չորս հարկացուցակներն էլ Էջմիածնին հետաքրքրել են միայն իրենց վերջին մասով, որտեղ մանրամասն նշված են վանքապատկան վակֆային կալվածները, վարելահողերը, այգիները, ջրաղացները և այլ ստացվածքներ, շեշտելով որ դրանք հարկման ենթակա չեն, և որ ընդհանրապես Էջմիածինը միանվագ որոշ գումար վճարելով, որպես «բերաթի փեշքաշ», ամբողջապես ազատվում էր հարկերից։ Սիմեոն կաթողիկոսին էլ, ինչպես տեսանք, այս հարկացուցակները միայն այս կողմից են հետաքրքրել։ Կից հրատարակվող հարկացուցակի համապատասխան հատվածի համեմատությունը նույն հարկացուցակի մասին «Ջամբռ»-ում տրված համառոտ նկարագրության հետ, ցույց է տալիս, որ այդ նկարագրությունները հիմնականում ճիշտ են։ Կան միայն երկրորդական նշանակություն ունեցող օբյեկտների մանրամասնության կամ այգիների ու վարելահողերի թվի որոշ աղավաղումներ, որոնք հարկացուցակներում հաճախ իրար համապատասխան չեն։ Արքունի դանձարանին միանվագ վճարվող տարեկան գումարների մասին Սիմեոն Երևանցին բավական մանրամասն է խոսում, այդ հարցում խիստ մեղադրելով Պոլսի պատրիարքներին[2]։

Անշուշտ հարկացուցակները իրենց այս տվյալներով նույնպես հետաքրքիր են և կարևոր են օսմանյան Թուրքիայի կողմից հայոց եկեղեցու և հայ

[1] Տե՛ս Վրթանեսի ընդարձակ դաֆթարը, էջ 21, 43, 50, 53, 54 և այլն։
[2] Ջամբռ, էջ 235—238։

հոգևորականության նկատմամբ վարվող քաղաքականության ուսումնասիրության համար, սակայն նրանք այս տեսակետից եզակի ընույթ չունեն: Էջմիածնին տրված հարկային արտոնություններին և հայ հոգևորականությանը վայելած որոշ առանձնաշնորհումների մասին ավելի մանրամասն և առատ նյութ են պարունակում սուլթանական հրովարտակները, որոնք անհամեմատ ավելի շատ են և բովանդակությամբ ավելի հարուստ:

Հարկացուցակների սկզբի մասը, սակայն, միանգամայն նոր և հետաքրքիր աղբյուր է, որին, ինչպես տեսանք, բոլորովին չի անդրադարձել Սիմեոն Երևանցին: 1725—1736 թթ. թուրքական օկուպացիայի ժամանակաշրջանից առայժմ մեզ հայտնի են միայն այս չորս հարկացուցակները: Այս տեսակետից էլ ահա դրանք եզակի նշանակություն ունեն և որպես այդպիսիք մեզ հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմելու նշված ժամանակաշրջանի հարկային սիստեմի, բնակչությունից գանձվող հարկերի քանակի, հարկային նորմերի և չափի մասին:

Բնակչության և հարկերի դրանցման ձևը համարյա չի տարբերվում «Վրաստանի ընդարձակ դաֆթար»-ի դրանցման ձևից: Այստեղ նույնպես նախ դրանցված են բոլոր ռայաթները, ըստ առանձին երդերի, անունով և հայրանունով, ապա թվարկված են գլխահարկն ու բոլոր դրամական և բնամթերային հարկերը. վերջիններս և՛ քաշով, և՛ դրամական համարժեքով: Այնուհետև տրված է այդ բոլորի ընդհանուր գումարը՝ աղչեով հաշված, որից հետո արդեն թվարկված են գյուղի սահմաններում կամ այլուր գտնվող վանքապատկան կալվածները և շարադրված են վանքին տրված մուաֆության պայմանները:

Այս շրջանի «կանոնագրքերից» Օ. Լ. Բարքանը իր ծավալուն աշխատության մեջ հրատարակել է միայն Դանձակի վիլայեթի «կանոնագիրքը», որը ունի իր առանձնահատկությունները և չի կարող հիմք ծառայել համեմատության[1], իսկ ինչպես ասվեց Անդրկովկասում այս թվականներին կազմված այլ հարկացուցակներ կամ նման քաղվածքներ մեզ հայտնի չեն: Մենք ավելորդ ենք համարում մանրամասն համեմատել կից հրատարակվող և մյուս հարկացուցակների հարկային նորմերը «Վրաստանի ընդարձակ դաֆթարի» կամ Օ. Լ. Բարքանի նշված աշխատության կանոնագրքերի մեջ հիշված նորմերի հետ, որովհետև դրանք հիմնականում վերաբերում են ԺԶ—ԺԷ դարերին: Թեև պետք է ասել, որ առանձին հարկային նորմեր որոշ վիլայեթների հետ համընկնում են: Մեր նպատակից դուրս է նաև այստեղ մանրամասն վերլուծության ենթարկել նշված հարկերն ընդհանրապես վերցրած: Այսպիսի ընդարձակ վերլուծության համար պակասում են զուգահեռ աղբյուրներ: Սակայն մեր ձեռքի տակ եղած այս չորս հարկացուցակներից վերոհիշյալ երկու հարկացուցակների ուշադիր համեմատությունը թույլ է տալիս որոշ գաղափար կազմելու օսմանցիների Անդրկովկասում վարած հարկային քաղաքականության մասին ընդհանրապես:

Ասացինք արդեն, որ այս չորս հարկացուցակների հիմքում ընկած են հիջրեթի 1137 (1725) և 1140 (1728) թթ. կատարված ցուցակագրումները: Հետևաբար բնակչության հաշվառման և հարկերի գանձման գործում տեղի ունեցած փոփոխությունները ուսումնասիրելու համար բավական է համեմա-

[1] O. L. Barkan, XV ve XVI inci asırlarda Osmanlı Imperatorluğunda zirai ekonominin hukukî ve malî esasları. I cild „Kanunlar" Istanbul, 1945, էջ 195—197:

տել միայն հիջրեթի 1137 (1725) թ. (թղթ. 1գ վավ. 316) և 1140 (1728) թ. կազմված (թղթ. 1գ վավ. 320) հարկացուցակների տվյալները:

Ներկա հոդվածով մենք հրատարակում ենք միայն առաջին հարկացուցակը, որի գրչությանն ճշգրիտ թվականն է հիջրեթի 1137 թ. շաաբան ամսի կեսերը (1725 թ. ապրիլ 27—30): Սա անշուշտ ընդարձակ դաֆթարից կատարված քաղվածքի թվականն է: Ընդհանուր աշխարհագիրը Երևանյան նահանգում կարող էր կատարվել միայն Երևանի գրավումից հետո, որը, ըստ Աբրահամ Երևանցու, տեղի է ունեցել 1724 թ. հունիսի 7-ին[1]: Ինչ էլ որ լինի, հրատարակվող հարկացուցակում արձանագրված են թուրքերի կողմից կատարված առաջին աշխարհագրի տվյալները:

Այս հարկացուցակը հաջորդ հարկացուցակից, ինչպես նաև Վրաստանի հարկացուցակներից տարբերվում է նրանով, որ այստեղ ռայաթները թվարկված են ըստ առանձին թաղերի: Պարզվում է, որ ԺԸ դարի սկզբներին Վաղարշապատ գյուղը բաժանված է եղել չորս թաղերի կամ մահալլաների, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր տանուտերը կամ քյադխուդան: Թեև ընդհանրապես վերցրած բնակչության և հարկերի գրանցման սկզբունքները նույնն են, սակայն 1728 թ. հարկացուցակը անհամեմատ ավելի ընդարձակ է ու մանրամասն: Այսպես, եթե հրատարակվող հարկացուցակում ռայաթների թվարկումից անմիջապես հետո արդեն խոսվում է գյուղից գանձվող հարկերի մասին, ապա այստեղ ռայաթների ցուցակին, որը տրված է առանց թաղային ստորաբաժանման, հաջորդում է գյուղի սահմաններում գտնվող այգիների, պարտեզների և ջրաղացների ցուցակը: Նշված է ռայաթներին պատկանող 87 այգի, 10 ջրաղաց, վանքապատկան 1 այգի, 2 վարելահող, 1 ջրաղաց, 1 դինդ, 1 ձիթհանք, 1 կարավանատուն և այլն, որից հետո միայն թվարկվում են գյուղից գանձվող հարկերը: Երևք տարվա մեջ հարկերի աճման մասին ճշգրիտ պատկերացում տալու համար հարկացուցակի այս հատվածը մեջ ենք բերում ամբողջությամբ.

Հասույթ՝			حاصل فى		
Իսփանջ	390 տուն, դինը՝	9900	٩٩٠٠ قيمت	٣٩٠ خانه	اسپنج
	126 ամուրի, »	3150	٣١٥٠ »	١٢٦ مجرد	
	6 այրի, »	36	٣٦ »	٦ ثيب[2]	
Ռասմ-ի գյոնում		1200	١٢٠٠		رسم دونيم
Ցորեն — 2000 քիլա, դինը՝		60000	٦٠٠٠٠ قيمت	٢٠٠٠ كيله	كندم
Գարի — 1800 » »		36000	٣٦٠٠٠ »	٨٠٠ »	جو
Կորեկ — 200 » »		4000	٤٠٠٠ »	٢٠٠ »	ارزن
Կտավհատ — 100 » »		10000	١٠٠٠٠ »	١٠٠ »	زكرك
Ոսպ — 100 » »		6000	٦٠٠٠ »	١٠٠ »	مرجمك
Միսեռ — 59 » »		6540	٦٥٤٠ »	٥٩ »	نخود

[1] Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, 1721—1736 թթ., Երևան, 1938, էջ 21:

[2] Թղթ. 1գ. վավ. 332 — بيوه.

Բամբակ — 580 ման, գինը՝	43500	٤٣٥٠٠ قيمت	پـــنبه ٥٨٠ من
Բանջարանոցների տասանորդը՝	1000[1]	١٠٠٠	عشر بستان
Այգիների »	10000	١٠٠٠٠	عشر باغات
Մրգի »	500	٥٠٠	عشر میوه
Ոչխարների հարկը	3000	٣٠٠٠	عـــادت اغنام
Անասունների հարկը (ռասմ-ի աղբել)	300	٣٠٠	رسم اغیل
Հիշյալ գյուղի երկու գործող ներկատները	2400	٦٤٠٠	بویه‌خانه در قریهٔ مزبوره. ٢ باب. رسم
Գյուղի բնակիչների 11 գործող ջրաղացները, կես տարին	660	٦٦٠	اسیاب در ید اهالی قریه. ١١ باب. رسم. نیم سال
Եկեղեցու 2 ձիթհանքները			بزیرخانهٔ کلیسا ایچمیازین. ٢ باب
Եկեղեցու մեկ ջրաղացը			اسیاب کلیساء ایچمیازین. باب
Եկեղեցու մեկ դինգը			دنك کلیساء ایچمیازین. ١ باب
Առվուլտի տասանորդը	120	١٢٠	عشر یونجه
Խոտի գինը	174	١٧٤	بهاء کیاه
Կուլա աղջիկների և այրիների հարսնության հարկը	90	٩٠	رسم عروس بکر و ثیبه
Հողի թափուի տուրքը	100	١٠٠	رسم طاپوی زمین
Ջառչիների (մանեատիկներ) տուրքը	120	١٢٠	رسم جارچیان
Աչքալուսանքի հասույթը (մահսուլ-ի մուժդեգանե)	211	٢١١	محصول مژده کانه
Հանցանքի և ոճիրի, բաղհավալի աղաթի, ընդհանուրի և խասսի բելթ-ուլ-մալի, բացակայող և կորած ապրանքների, դաշտապահության (դաշթիբանի), փախած ծառաների և աղախինների գնի, անասունների՝ ձիան և կովի, ծխի, վկայության(*) և այլնի համար	12321	١٢٣٢١	و بابت جرم و جنایت و بادهوا و عادت و بیت المال عامّه و خاصّه و مال غایب و مال مفقود عادت دشتبانی و بهاء قاچفون قول و جاریه و بهالق اغنام و اسب و کاو و رسم دوخان و ضمانه(؟) و غیره
Գումարը՝	211322	٢١١٣٢٢	یکون

[1] Բնագրում սխալմամբ 2000 է գրված, այդ դեպքում հարկերի ընդհանուր գումարը հիշա չի ստացվում: 1000-ով գումարը համապատասխանում է: Այդպես է 1731 թ. հարկացուցակում:



Վաղարշապատ գյուղի 1728 թ. հարկացուցակի թուրքերեն բնագրի բնակչությունից դանձվող հարկերին վերաբերող հատվածը:

Ինչպես տեսնում ենք, գյուղից դանձվող հարկերի ընդհանուր գումարը 1725—1728 թթ. ընթացքում 91515 աղչեից բարձրացել է 211322 աղչեի, այսինքն երեք տարվա ընթացքում ավելացել 2,3 անգամ: Երկու հարկացուցակների ուշադիր համեմատությունից պարզվում է, որ առաջին աշխարհագրի ժամանակ գյուղից չեն պահանջել 9 անուն հարկեր, որոնց ընդհանուր դրամական համարժեքը հավասար է 15165 աղչեի: Այդ հարկերն են.

1. Ռասմ-ի գյոնում	1200 աղչե
2. Ոսպ —100 քիլա	6000 »
3. Սիսեռ —59 քիլա	6540 »
4. Մրգի տասանորդը	500 »
5. Անասունների հարկը	300 »
6. Առվույտի տասանորդը	120 »
7. Խոտի գինը	174 »
8. Ջառչիների տուրքը	120 »
9. Աչքալուսանքի հասույթը	211 »
Գումարը՝	15165 աղչե

Իսկ առաջին աշխարհագրի ժամանակ հաշվի առնված հարկերի աճը երկրորդ աշխարհագրի ժամանակ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Հարկի անունը	1725 թ.	1728 թ.
1. Իսփանջ	9325	13086
2. Ցորեն	48300	60000
3. Գարի	11500	36000
4. Կորեկ	5750	4000
5. Կտավհատ	750	10000
6. Բամբակ	2000	43500
7. Արդիների տասնորդը	7455	10000
8. Բանջարանոցների տասնորդը	1650	1000
9. Ոչխարների հարկը	1035	3000
10. Ներկատներ	600	2400
11. Զրադացների հարկը	330	660
12. Հարսնության հարկը	60	90
13. Հողի թափու, դաշթրանի, բաղտավա, հանցանք ու ոճիր, փախած ծառաների, կորած ապրանքի ու անասունների համար գանձվող և այլ տուրքեր	2760	12421
Գումարը՝	91515	196157
Տարբերությունը՝	104642	

Այսպիսով, 1725 թ. դրանցված հարկերը 3 տարի հետո ավելացել են 104642 աղչեով, սրա վրա պետք է գումարել 9 անուն նոր հարկերի ընդհանուր գումարը՝ 15165 աղչե, ստացվում է 119807 աղչե, այն տարբերությունը, որ գոյություն ունի առաջին և երկրորդ հարկացուցակների ընդհանուր գումարի միջև։

Այստեղ ակնբախ է այն փաստը, որ հավելյալ նոր հարկերի գումարը անհամեմատ ավելի քիչ է, քան հին հարկերի ուռճացման շնորհիվ գոյացած վերադիրը։

Հարկերի ավելացումը կարող էր առաջանալ նաև որոշ օբյեկտիվ պատճառներից, ինչպես օրինակ բնակչության աճ, ոռոգման ցանցի ընդարձակում, նոր հողերի յուրացում և այլն։ Սակայն ինչ էլ որ լիներ կասկածից դուրս է, որ այդ երեք տարիների ընթացքում, երբ երկրում դեռ շարունակվում էին ներքին կռիվներն ու ամենուրեք պայմանները անապահով էին, տնտեսական կյանքը այդպիսի զարգացում չէր կարող ապրել։ Բավական է թեկուզ համառոտակի քննություն տանել կանխիկ դրամով գանձվող հարկերից մեկի՝ իսփանջի ընդհանուր գումարում և գանձման սկզբունքներում տեղի ունեցած փոփոխությունները, համոզվելու համար, որ հարկերի այս աճելի աճը հետևանք է միայն օկուպացիոն իշխանությունների կողմից կիրառվող նոր հարկային քաղաքականության։

Իսփանջի ընդհանուր նորման սկսած դեռևս ԺԶ դարից ընդհանրապես եղել է յուրաքանչյուր չափահաս տղամարդից 25 աղչի։ Այդպես է և՛ «Վրաստանի ընդարձակ դաֆթարում» և՛ Օ. Լ. Բարքանի հրատարակած «Կանուններում»։ Իսփանջի նույն սակն է պահպանված նաև Վաղարշապատի հարկացուցակներում։ Սակայն, եթե 1725 թ. հարկացուցակում բավարարվել են նրշելով միայն ամուսնացած տղամարդկանց, ապա 1728 թվականին արդեն այս վերջիններից բացի, որոնց թիվը 373-ից բարձրացել է 390-ի, հիշատակված են նաև 126 ամուրիներ և 6 այրիներ։ Ամուսնացածներից և ամուրիներից գանձվել է 25-ական, իսկ այրիներից 6-ական աղչի։ Ի դեպ նշենք նաև, որ հարկատու ռայաթների այս երեք կատեգորիաների գումարը լինում է 390+126+6=522, իսկ ռայաթների անվանական ցուցակում նրանց ընդհանուր թիվը 511 է։ Հարկերի ժամանակ անշուշտ հիմք էր ընդունվում առաջինը. եթե գումարը մտել էր արդեն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ, ապա գյուղական համայնքը պարտավոր էր անթերի հատուցել այն։ Այսպիսով ուրեմն հարկատուների թիվը խարդախ կերպով ավելացված է ևս 11 հոգով, իսկ հարկը 275 աղչի գումարով։

Թերևս կարելի է հավատալ, որ 3 տարվա ընթացքում գյուղի հարկատու ռայաթների թիվը կարող էր 373-ից բարձրացած լինել 390-ի։ Թուրքական արշավանքների ժամանակ կարող էին գյուղից հեռացած ու վերադարձած մարդիկ լինել։ Բայց որ այդ նույն ժամանակամիջոցում հանկարծ կարող էին գյուղում հայտնվել 126 ամուրիներ, որոնք 3 տարի առաջ չկային, դա անշուշտ անհավատալի երևույթ է։ Պետք է կարծել, որ նույնքան կամ մի քիչ ավելի փոքր թվով ամուրիներ, ինչպես նաև այրի տղամարդիկ գյուղում եղել են նաև 1725 թվականին, սակայն այն ժամանակ, երբ դեռ երկրի նվաճումից անցել էր ընդամենը մի քանի ամիս, և դեռ նվաճողները իրենց այնքան էլ ամուր չէին զգում, ավելի մեղմ մոտեցում են ունեցել և մանրամասնությունների մեջ չմտնելով գրանցել են միայն ամուսնացած տղամարդկանց։ Իսկ եթե ընդունելու լինենք, որ առաջին ցուցակի 373 հոգու մեջ մտնում են նաև ամուրիներն ու այրիները, ապա դա նշանակում է, որ 3 տարվա մեջ գյուղի բնակիչների կամ ավելի ճիշտ հարկատու ռայաթների թիվը ավելացել է 40 տոկոսով, որը բավական անհավանական է թվում։

Սակայն եթե իրոք մի բոպե ընդունենք, որ ինչ-որ արտակարգ պայմանների շնորհիվ ռայաթների թվի նման հավելում է տեղի ունեցել, այդ դեպքում էլ նույնիսկ չի պատճառաբանվում հարկերի ընդհանուր գումարի ալդալիսի մեծացումը, որն ինչպես տեսանք հավասար է 230 տոկոսի։

Եվ իրոք, բացի իսփանջից, հարկերի ուռճացման նույն տենդենցը նկատվում է նաև գյուղի բնակչությունից գանձվող մյուս հարկերի ու տուրքերի հաշվառման մեջ։ Այսպես, թեև ցորենի քանակը 2300 քիլալից իջել է 2000 քիլալի, սակայն քանի որ յուրաքանչյուր քիլա ցորենի գինը 21 աղչեից բարձրացել է 30 աղչեի, ցորենի հարկի ընդհանուր դրամական համարժեքը 48300 աղչեից բարձրացել է 60000 աղչեի։ Գարու հարկի և՛ քանակն է ավելացել, և՛, գնի կրկնակի բարձրացման շնորհիվ, ընդհանուր գումարը 11500-ից բարձրացել է 36000 աղչեի։ Թեև կորեկի գինը ևս կրկնապատկվելով 10 աղչեից բարձրացել է 20 աղչեի, սակայն գյուղից գանձվող կորեկի չափը 575 քիլալից իջեցվել է 200 քիլալի, որի հետևանքով էլ կորեկի հարկի դրամական համար-

ժեքը 5750 աղչեից իջել է 4000 աղչեի։ Նկատվում է կտավհատի գնի շատ մեծ վերելք՝ 15 աղչեն դարձել է 100 աղչե։ Այս ամենից շատ թանկացած ապրանքի գյուղից պահանջվող հարկի քանակը կրկնապատկված է. նախկին 50 քիլալի փոխարեն պահանջվում է 100 քիլա, որի հետևանքով հարկն էլ 750 աղչեից բարձրացել է 10000 աղչեի։ Բամբակի գինը ևս 40-ից բարձրացել է 75 աղչեի, իսկ հարկի քանակը 50 մանից բարձրացել է 580 մանի, հետևաբար հարկի դրամական համարժեքն էլ բազմապատկվելով շուրջ 22 անգամ 2000 աղչեից հասել է 43500 աղչեի։ Այնուհետև 2545 աղչեով ավելացել է ալգինների տասանորդը, փոխարենը պակասել է բանջարանոցների տասանորդը։ Ոչխարի հարկը ավելացել է մոտ 3 անգամ, 1135 աղչեից բարձրանալով 3000 աղչեի։ Ներկատներից գանձվող գումարը բազմապատկվել է 4 անգամ, 600 աղչեից բարձրանալով մինչև 2400 աղչե։ Ջրաղացների հարկը կրկնապատկվելով՝ 330 աղչեից բարձրացված է 660 աղչեի։ Հարսնության հարկի վրա չնչին հավելում է եղել (60—90), ի հաշիվ հավանաբար այրի կանանց ամուսնության, որովհետև ըստ «Կանոնանամեի» կույս աղջիկներից գանձվում էր 60, իսկ այրիներից՝ 30 աղչե, գումարը լինում է 90 աղչե։ Խիստ մեծացել է նաև գանագան անուններով հոգուտ պաշտոնյաների գանձվող հարկերի ընդհանուր գումարը, 2760 աղչեից հասնելով մինչև 12421 աղչեի։ Այսպիսով, բացի կորեկից և բանջարանոցների հարկից, որոնք շատ չնչին չափով պակասել են (2400 աղչե), մյուս բոլոր հարկերը մեծ կամ փոքր չափով ավելացել են։

Հարկացուցակների տվյալներով պարզվում է, որ 3 տարվա ընթացքում տեղի է ունեցել մթերքների և գյուղատնտեսական այլ ապրանքների գների զգալի բարձրացում, որը հաշվի է առնվել նոր աշխարհագրի ժամանակ։

Գների աճը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ապրանքի անունը	Կշռային միավորի գինը 1725 թ.	Կշռային միավորի գինը 1728 թ.
1. Ցորեն	21 աղչե	30 աղչե
2. Գարի	10 »	20 »
3. Կորեկ	10 »	20 »
